32. ՀԱՄԱԼԸՆ ՈՒ ԲԱԽԱԼ ԲԱՇԻՆ

Կէղնի, չէղնի համալը կէղնի։ Ավուրը մեկ կէրթա բախլիմ՝ դուքներ դուռ կկանի, ձեռք կերկնցու եմիշ կուղե։

Էդ բախալը կըսե.—Էդա Իստանպոլու քաղքի մեջ դու չըս ամչնա՞, էկեր իս ձեռք կերկնցնուս, եմիշ կուզես։

Համալն կըսե.—Ըպա ի՞նչ էնիմ, գործ չկա, անոթի իմ։

Կըսե.—Ես քզի գործ կցուցում, գնա էրե։

Կվերցու լըփըմ չամիշ կիտա, կըսե.—Գնա՛ կանի բաղնեց դուռ, խանըմներ կէլնին, էնդոնց բողչեք կառնիս, հետ ուրանց կէրթաս տուն։ Քզի կիտան քանիմ փարա, կէրթաս քու իդարեն կէնիս։

Համալն է, գնաց կանավ բաղնեց դուռ, տեսավ օր խանումըմ էլավ։

Ըսեց.—Համալ, առ էդա բողչեն, էրթանք տուն, քզի քանիմ՝ փարա կիտամ, կտանիս կխըրճիս։

Առավ բողչեն, ընկավ խանումի առեջ, գացին տուն։ Մարթ չկեր էդ խանումի տուն, ինք մինակ էր։ Էլան վերին դին, համալ դրեց բողչեն տախտ, էդ էր կղառներ, խանում չթողեց, բերեց կերակուվ դրեց, համալն հաց օր կերավ խըլըսավ։

— Խանումն ըսավ.—Էլի՛։

Էլավ, ինք պառկավ, քաշեց վրեն։.

Խանում օր ուր գործ տեսավ խըլըսավ, էլավ հագավ զուր թունրան, հանեց էրկու օսկի լէ տվեց, ասեց.—Վաղ լէ արի։

Համալն առավ զէրկու օսկին դրեց ծոցք, վազեց էկավ բախալ-բաշու մոտ։

Ասեց.—Բախալ-բաշի՛, շնորհակալ իմ քինե, աստված զքու օրթիք բաշխե օր էդա բան կամեցար ընձի։

Բախալ բաշին ըսեց.—Ի՞նչ էղավ։

Համալն մեկ-մեկ թարիֆ էրեց, թե.—Դացի կանա բաղնեց դուս, էլավ խանումըմ, ասեց. «Համալ, առ էդա բոզչեն, էրթանք տունա։ Առա էկա, հանեց զընծիկ վերին դին, տվեց հաց կերա, սորա զուր գործ տեսա, հանեց էրկու օսկի լէ տվեց ընծիկ, ըսեց. «Վաղ սահաթ հնգին արիա»։

Բախալ-բաշին մտածեց՝ իմալ օր համալ թարիֆ կէնեբ, էդի իմ տուն է ու իմ կնիկն է, ըսեց։

Ըսեց.—Վաղ լէ պիտի էրթա՞ս։

Համալն ըսեց.—Հա՛, կէրթամ։

Բախալ բաշին ըսեց.—Օր էրթաս, կիգա՞ս ընծի խաբար ի-տա՞ս ու էրթաս։

Համալն ըսեց.—Հա՛։

Օլոր օր, սահաթ էղավ հինգ, համալ էկավ բախլի դուքան, ըսեց.—Բախա՛լ-բաշի, ես կէրթամ, ի՞նչ կասիս։

Բախալ-բաշին ըսեց.—Ի՞նչ պիտի ասիմ, բան չըմ ասի, գնա, օղուր էղնի քզի։

Համալն էլավ գնաց, հասավ տուն չհասավ, կես սահաթ քաշեց համալի ու բախալ-բաշու էրթալու մեշ, ըստհաղ բախալ բաշին էլավ գնաց, դուռ փակ էր, զարկեց զդուռ։ Կնիկ էկավ փանջարից իշքեց տեսավ օր ուր իրիկն է, բերեց զհամալ պըլուվեց խըսիլ, կանկըցուց դռան ետև ու գնաց զդուռ բացեց, իրիկ էլավ էկավ։

Էլավ, էկավ, էսդին իշեց, էնդին իշեց համալ, համալ չգտավ։

Կնիկ ըսեց.—Ի՞նչ կիշիս, մա՛րդ, խեր էղնի։

Ըսեց.—Բան չէ, սիրտս նեղեցավ, էկա կիշիմ քզիկ ու կէրթամ։

Բախալ-բաշին օր համալն չգտավ, թորկեց դարձավ էկավ ուր դուքան։

Իրիկն օր գնաց, կնիկն իշավ զդուռ մուխքյամ փակեց, էկավ զհամալն խըսլի միջեն հանեց, կերցուց, խմցուց, քաշեց վրեն,

հանեց իրեք օսկի լէ փարա տվեց, ըսեց. —Վաղ էդա գահ, սահաթ վեցին, հնգին մեկ լէ իգաս։

Համալն էլավ էկավ բախլի դուքան, բախալ-բաշին հարցուց, ըսեց.—Գացի՞ր։

Համալն ըսեց.—Գացի՛, բըլե իմ գլուխ օղիաթ էլավ։

— Իմա՞լ,—ըսեց բախալ բաշին։

Ասեց.—Գացի, էկավ կնկա իրիկ, զարկեց զդուռ, կնիկն էլավ զիս պլուվեց խըսիլ, կանկըցուց դռան իտև, իրիկն էկավ փնտրեց, չկառցավ գտավ։ Թորկեց գնաց. իրիկն օր գնաց, իջավ դուռ փակեց, էկավ զիս հանեց, կերանք, խմեցինք, զուր գործս տեսա, հանեց իրեք օսկի տվեց ընծիկ, ըսեց.—Վաղ էդա գահ մեկ լէ իգաս,—թորկի էկա։

Բախալ բաշին ըսեց.—Վաղ լէ պիտի էրթա՞ս։

— Ըպա,—ըսեց,—ես քոռցե՞ր իմ, իմ աչք կհանե՞, հ՚ո՞րի չպիտի էրթամ։

— Շատ աղեկ,—ըսեց,—օր էրթաս, ընծիկ կիգա՞ս խապար իտաս։

— Ըպա,—ըսավ,—ես քոռցե՞ր իմ, չըմ իգա՞ քզի խաբար իտա։

Օլոր օր, սահաթ օր էղավ հինգ ու վեց, մեկ լէ էկավ համալ կանավ բախալ-բաշու դուքնի դուռ։ —Բախալ բաշի, ըշթա ես կէրթամ։

Բախալ բաշին ըսավ.—Կէրթաս, գնա, տեր քու հետ էղնի։

Համալն օր գնաց, կես սահաթ մնաց, չմնաց, բախալ բաշին էլավ ընկավ ետև, գնաց զդուռ զարկեց, դուռ գոց էր, կնիկ էկավ, փանջարից իջեց տեսավ օր ուր իրիկն է, վերցուց զհամալ դրեց ուկլուվ ջըլերու տակ, զջլեր ջարեց վրեն, իջավ զդուռ բացեց, իրիկն էլավ էկավ, էսդին իջեց, էնդին իջեց, բանըմ չգտավ, վախենալուն էլ կնկան բան չըսե։

Կնիկն ըսավ.—Ի՞նչ է կօլըրտիս, ի՞նչ է կիշիս, հալբաթ բանըմ կա։

Ըպա ըսավ.—Բան չկա, սիրտս նեղեցավ, էլեր իմ էկի ընկի էսդին ու էնդին օր կընցում։

Թողեց իջավ գնաց ուր դուքան. օր գնաց ուր դուքան, կնիկն իջավ, խալիմըմ զտան դուռ փակեց, էլավ վերին դին, քակեց զուկլուկ, զհամալն հանեց ջըլերու տըկեն, կերան, խմեցին, քաշեց վրեն, հանեց չորս օսկի փարա տվեց, ըսեց.—Վաղ մեկ լէ իգաս։

Համալն առավ չորս օսկին, ուրախացավ, էկավ բախչի խեչ, բախալ-բաշին տեսավ, ըսեց.—Էկա՞ր։

Ըսեց.—Էկա՛, բայց իմ գլուխ օղյաթ էլավ։

— Ինչի՞։

— Իրիկն էկավ։

— Իրիկն էկավ, դու հ՞ո՞ւր էր՝ զքզի չգտավ։

Ըսեց.—Ձիս դրեց ուկլուկ, դրեց ջըլեր իմ վրես, գնաց զդուռ բացեց, էկավ փնտրեց, փնտրեց չգտավ, թողեց գնաց։

Էն օր գնաց, գնաց զդուռ փակեց, էկավ ձիս հանեց շլերու տկեն, կերանք, խմեցինք, զմըր քեֆ էրինք, զիմ գործ տեսա, հանեց չորս օսկի լէ փարա տվեց ընծիկ, ըսեց. —Վաղ էս վախըտ մեկ լէ իգաս։

Ըսի.—Թըղ էղնի։

Բախալ բաշին ըսեց.—Օր էրթաս, կիգաս ընծի կըսես։

Ըսեց.—Հ՞ո՞րի չըմ իգա։

Մնաց լուս մութ էղավ։ Էլավ էկավ, էկավ բախալ-բաշու մոտ, ըսեց.—Բախալ բաշի՛, ըշթա ես կէրթամ։

Ըսեց.—Օղուր էղնի, դը՛ գնա,—էլավ ինք քիչըմ մնաց, ետևեն գնաց։

Ըսեց.—Կէրթամ, օր չգտնամ, զտուն կվառիմ վրեն ու կիգամ։

Էլավ էկավ դուռ զարկելու պես, կնիկ վազեց փանջարեն, տեսավ իրիկ կատղուկ, հերսոտ է։ Էկավ բացեց զչաքմաճեն, զհալավ դրեց չաքմաճեն, զտղեն լէ դրեց վըր հալվին, զդուռ փակեց, զբալնիք դրեց ճեպ, իջավ զդուռ բացեց։ Իրիկն էլավ վի, էսդին իշեց, էնդին իշեց, բանըմ չգտավ։

Ըսեց.—Էլի դուրս, զիմ տուն կվառիմ։

Կնիկն ըսեց.—Աստծու սիրուն էղնի, դու ծըռեր ե՞ս, հ՞որի՞ն կվառիս։

Ըսեց.—Իմ տունս է՝ կվառիմ, քզիկ ի՞նչ։

Կնիկ ըսեց.—Էդա չաքմաճեն իմս է, իմ հոր տնեն բերեր իմ, կանի հանիմ դուրս, քու մալն է, կվառիս՝ վառե։

Կանչեց համալ, զհոր տան չաքմաճեն տվեց համլի շալակ, տարավ դրեց ուր հոր տան հ՞օդեն։ Տվեց զհամլի փարեն, դարցավ էկավ, բացեց զչաքմաճի դուռ, հանեց զհամալ, կերավ, խմեց, քաշեց վրեն, հանեց հինգ օսկի տվեց համլին, ըսեց.—Դը՛, գնա։

Բախալն է, զկնկա չաքմաճեն օր հանեց դուրս, կրակ տվեց ուր տան օռ։ Միտքն էն էր՝ բալքիմ էլներ համալ փախներ, ռներ.

տուն վառավ էղավ փոշի, տեսավ օր համալ չէլավ, թորկեց, էկավ ուր դուքան նստավ։ Համալ դարձավ էկավ բախլի մոտ։

Բախալն հարցուց, ըսեց.—Գացի՞ր։

Ըսեց.—Գացի՛, վազ անցի, էսօր հ՚ըմեն ավուր մոտեն, դրհա շատ օդյաթ էլավ իմ գլուխ։ Գացի օր քեֆ կէնեք, մեկ լէ տեսնամ իրիկ էկավ զարկեց զդուռ, կնիկ հանեց զիս դրեց ուր շաքմաճի մեշ, իրիկն էկավ, ըսավ.—Էլի դուրս, զիմ տուն կվառիմ։

Կնիկն ըսեց.—Կվառիս վառե, կանի զիմ հոր տան շաքմաճեն հանիմ միշեն, մեկ լէ վառե։ Հանեց շաքմաճեն տվեց համլի շալակ, տարավ ուր հոր տուն, դրեց հ՚օդեմ, բացեց շաքմաճի դուռ, էլա դուրս, կերանք խմեցինք մըր քեֆ էրինք, հանեց հինգ օսկի լէ տվեց ընծիկ, ըսեց. «Էլ մի՛ գաս։

Բախալ բաշին ըսեց.—Ցամա՛ն, գնա էդա տեխեն, բալքիմ ես քու ձեռքեն ազատիմ։ Քանի օր ես իմ էրի իմ ձեռքով, հանեց տաս օսկի տվեց համլին, բերեց դրեց կյամին, դարձավ գնաց ուր դուքան, նոր ազատավ բախալ բաշու յախեն ու ուր կնկա՝ համալի ձեռքեն։